ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՐԻ · ՆԻՒ ԵՈՐՔ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 1, 1895 · ԹԻՒ 15 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 102

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West, 23d St., New York N. Y. Vol. V, 1895.

Հասցէ
Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.
կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ԳԱՅՄԱՆԸ
Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն ֆրանք
Կանխիկ

ՌՈՎԸՆԴԻՐԿՈՒԹԻՒՆ

Հեռագրական Լուրեր.— Սասունցի Պ. Վարդան ի Նիւ Եորք.—Հայք և Վարդան.—Ռուսիա, Անգլիա և Հայաստան.— Նամակ Կ Պոլսէ.— Մի Տխուր Իրողութիւն.— Հայաստանի վիճակն.— Հայոց Հայրենասիրական Դաշնակցութիւն. Այլևայլք.

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ·Պոլիս, Օգ·20·—Դրան վերջին պատասխանն տէրութեանց ներկայացուցիչներուն՝ վերաբերութեամբ Հայկական բարեկարգութեանց խնդրոյն, կը յիշէ միայն երկրորդական կարեւորութիւն ունեցող բարեկարգութիւններն և կը մերժէ եւրոպական գործակցութիւնն խոստացուած բարուքումներն իրագործելու մէջ։ Դուռն կ'ասէ թէ այդ պիտի լինէր մահացու հարուած մի Սուլթանին վեհապետութեան և օսմանեան կայսրութեան անկախութեանն։

Լոնտոն, Օգ·26· Շաքիր փաշա, Սուլթանին աւագ թիկնապահն, որ անցեալ Յունիսին կայսերական յանձնակատար անուանեալ էր Հայկական բարեկարգութեանց համար, ճանապարհ ինկաւ հապճեպով կիրակի օրն յատուկ շոգենաւով դէպի իւր պաշտօնի վայրն։ Երեք անգլիական մարտանաւեր Միտիլլիէն մեկնած են։ Դոցա մերձեցումն կը բացատրէ Շաքիրի վաղվաղկոտ մեկնումն։ Կ·Պոլսոյ ազդեցիկ շրջանաց մէջ կը պնդեն թէ պէտք էր Տարտանելն բռնաբարել առանց տատամսելու, եթէ ոչ Բրիտանական ազդեցութիւնն ծանրապէս կը վտանգի յԱրեւելս։ Նաւատորմիղի մի ներկայութիւնն միայն կրնայ համոզել Սուլթանն թէ Լ·Սալզպէրի, Մեծին Բրիտանիոյ Նախարարապետն, լուրջ կերպով կը պնդէ Հայաստանի մէջ բարեկարգութիւններ մուծանելու վերայ։

Լոնտոն Օգ·28·Դուռն դառնապէս գանգատած է Ֆռանսայի և Ռուսիոյ թէ Անգ-

լիա Հայկական խնդրոյն առթիւ անքաղաքավար և անպատշաճ կացք և ընթացք ունի Թուրքիոյ դէմ, որով Սուլթանին ազդեցութեան կը ենթատ։ Նա կը դիմէ ուրեմն Ռուսիոյ և Ֆռանսայի որ բարեխօսեն Մեծին Բրիտանիոյ քով եղանակաւորել իւր կացքն։ Ռուսական և Ֆռանսական ներկայացուցչաց պատասխաններն, սակայն, նպաստաւոր չեն Թուրքիոյ խընդիրքին և Սուլթանի չեն ընծայեր ոևէ քաջալերութիւն։

Տէյլի Նիւզի կը հեռագրեն Կ. Պոլսէն թէ այդ քաղաքին դեսպանք լուր ստացած են թէ Հայաստանեայց վիճակն այժմ յոռեգոյն է քան երբէք։ Անոնցմէ հարիւրաւորներն սովամահ կը գրաւին ի կենաց։ Տէրութեանց չգործողութիւնն առթիւ կուտայ Բրդաց ծաղրաբանել եւրոպական օգնութեան վերայ որում կը սպասեն Հայք։

Կ. Պոլիս Օգ. 29. Այս տեղ կը գրուցեն թէ Լ. Սոլզպէրի խնդրած է Դոնէն եղանակաւորել առաջարկեալ Յանձնախումբը Հայաստանի վերատեսչութեան համար՝ անդամոց թիւն եօթնի հանելով, որոնցմէ երեքն լինին Տէրութեանց պատուիրակք։

Լոնտոն, Օգ. 29. Տէյլի Նիւզն վաղն հեռագիր մի պիտի հրատարակէ Կ. Պոլսէն ծանուցանող թէ Դուռն խնդրած է Հայոց Պատրիարքէն բացատրութիւն տալ նկատմամբ կրօնական պաշտամանց որք Կ. Պոլսոյ Հայ եկեղեցեաց մէջ կատարուած են Օգ. 25ին ի հանգիստ հոգւոցն Սասնոյ զոհերուն, և թէ Պատրիարքն պատասխանած է՝ Հայ եկեղեցւոյ սովորութիւնն է աղօթել վասն հոգւոցն հանգուցելոց։

Տէյլի Նիւզ Դրան այս արարքն ուժգին լեզուաւ պիտի քննադատէ, ինչպէս նաև զուրիշ գործերն Թուրք կառավարութեան։ Ի Մէջ այլոց պիտի ասէ— «Դուռն վատէ ի վատթարն կ'երթայ յառաջ։ Բոլոր եկեղեցեաց սովորոյթն է աղօթել վասն կենդանեաց, բայց կան մարդիկ որոց վասն աղօթք մատուցուելու ժամն անցած է, և այդ կարգին կը վերաբերին այն անամօթ ոճրագործներն որք այդպէս նախատած են մի քրիստոնեայ եպիսկոպոս։»

Թերթն դարձեալ պիտի պնդէ որ տէրութիւնք լուծեն վայրագ անզգամաց զոհերուն վրէժն։

Կ. Պոլիս, Օգ. 31. — Կացութիւնն հոս այնքան տագնապալի է որ Մեծ Եպարքոս Սախտ փաշա դարձեալ ղիւր հրաժարականն մատուց Սուլթանին։

Լոնտոն, Օգ. 31. — 30 հազար Նորաձև հրացանի և 15 միլիոն փամփուշտի նուէրըն զոր Զարն արաւ Մոնթէնէկրոյի, չատ խօսակցութեան նիւթ եղած է յԵւրոպա։

Ոմանք կը կարծեն թէ Զարին այդ գործն սպառնալիք մ'է Եւրոպիոյ խաղաղութեան։ Կ'ասեն թէ Ռուսիոյ դիտաւորութիւնն է ամրողջացուցանել Մոնթէնէկրոյի պատերազմական պատրաստութիւններն մինչև այն օր յորում ինքն ալկաղմ պիտի գտնուի գործելու։

Բարձրագիր դիւանագէտ մի հոս երէկ ասաւ թէ չէր կարծէր որ պատերազմն մօտալուտ էր, Սակայն կը հաւատար թէ այժմ աւելի քան անցեալ վեց տարիներում հնարաւոր է պատերազմն։ Նա կ'ասէ թէ բոլոր Պալքանեան պետութիւնք կը զգան ճգնաժամու մերձեցումն և ըստ այնմ միջոցներ ձեռք կ'առնուն։

Լոնտոն, Օգ. 31. — Օգ. 28ի դահլճի ամապարեալ նստէն ի վեր սրտայոյզ զրոյցներ լսուեցան իբր թէ Բրիտանական նաւատորմն յղուեր է Պէշիքայի ծոցն, ցոյցեր են եղեր Պոսֆորի վերայ, ևն։ Յետոյ երեւաց սակայն թէ Ֆռանսա և Զինաստան գլխաւորապէս զբաղեցուցած են դահլիճն։ Ռուսիա գործօն փորձ մի կ'անէ, Ֆռանսայի օգնութեամբ, դուրս հանել զԲոպէրթ Հարթ Զինաստանի մաքսին գեկավարութենէն, և անոր տեղ դնել Ֆռանսացի և ռուս պաշտօնեաներ։ Այս բան Անգլիոյ վաղընդփոյթ միջամտութիւնն կը պահանջէր։

Լոնտոն, Օգ. 31. — Պահպանողական թերթերն սկսած են փոխել իրենց լեզու վերաբերութեամբ Հայկական խնդրոյն։ Անգլիա չպարտի բռնադատել զԹուրքն, կ'ասեն, և այնպէս միջոց տալ Ռուսին որ Հայաստանի և Ռումելիոյ մէջ իւր աշխար-

հակալական ծրագիրներ ի գործ դնէ ի վնաս անգլիական շահուց։

ՔԷՄԱԽ ԵՒՍ ԱՒԵՐԱԿ

Պէրլին, Օգ. 30. Վօլֆիշէ Ցայթունկ լուր առած է Տփղիսէն թէ 5,000 զօրք և 10,000 Քիւրդ, Սաքօ փաշայի առաջնորդութեամբ, յարձակեր են Քէմահի և մի քանի գիւղերու վրայ։

Կողոպտեր են եկեղեցիներն ու վանքեր և այրեր են տներ։

ՍՈՒԼԹԱՆՆ ՉԻ ԳՏՆԵՐ ԲԱՐԵԿԱՄ

Լոնտոն, Սեպտ. 2, առաւօտեան ժամ 4. (Ռուօյտըրին), Կ. Պոլսէն հեռագիր մի կը ծանուցանէ թէ նախարարք ժողով ունեցան յարքունիս երեք երեկոյ յաջորդաբար, մնալով մինչև կէս գիշեր, քննել Հայաստանի խնդիրն։

Կ՚ասեն թէ Դուռն խնդրեր է Ուիլելմ կայսրէն միջամտել, սակայն նա մերժեր է այն պատճառաւ որ Դուռն յարգած չէր նորա խրատն՝ բարեկարգութիւններ մուծանելու մասին։

Ապա դիմած են Նախագահ Ֆօրի, և սա ալ մերժած է ոևէ միջամտութիւն անել առանց տէրութեանց համաձայնութեան։

ՏԱԼՒՈՐԻԿՑԻ ՎԱՐԴԱՆ

Ի ՆԻՒ ԵՈՐՔ

Անգլիոյ մէջ հինգ ամիս աշխատելէ յետոյ Տիար Վարդան Տիլյեան եկած է յԱմերիկա տեսնել այս երկրի Հայերն։

Վերին աստիճանի շահեկանութիւն ունի այս ինքնաբեր այցելութիւնն, վասնզի Ամերիկայի թերթերն պիտի կրնան այս վկայի կենդանի շրթունքէն առնլով հրատարակել Սասնոյ կոտորածին պատմութիւնն՝ ահաւոր մանրամասնութիւններով։

«Հայքի» խմբագիրն երկար և հետաքրքրական տեսակցութեամբ բազում կարեւոր տեղեկութիւններ քաղեց Տ. Վարդանէ, որ կոտորածին ատեն հայ պատերազմիկներուն մին եղած է, աննկարագրելի նեղութիւններ կրած և վերջապէս խոյս տուած է հազար մահուան մէջէն անցնելով։

Մեք Հայերս դիւրութիւն չունիմք յատուկ թղթակից յղելու ի Հայաստան, ինչպէս արին եւրոպացիք. բայց ահա Սասունցի քաջ մի անձամբ եկած է մեզ պատմել, իւր լեզուով և բաղձալի ճշդութեամբ, այդ պատմական դէպքերու մասին, և Ամերիկայի հայ գաղթականաց առջեւ իբրև նմոյշ Սասնոյ քաջերուն կենալով՝ ներշնչել սէր և անձնուիրութեան ոգի դէպ ի տառապեալ Հայրենիքն։

Յաջորդ թուոյ թողլով ընդարձակ տեղեկագրութիւնն մեր տեսակցութեանց, առ այժմ կուտամք մեր ընթերցողաց մի քանի կարեւոր կէտեր։

«ՀԱՅՔ» ԵՒ ՎԱՐԴԱՆ

Հ.— Անցեալ տարուան մահմետական խժդժութեանց քանի՞ գիւղ կարծէք ենթարկուեցան։

Վ.— Եթէ փոքրիկ շէներն ալ հաշուեմք, մերձաւորապէս 80 գիւղ կրնամ ասել։

Հ. Փոքրիկ շէն մի քանի՞ ընտանիքէ բաղկացած պէտք է իմանալ։

Վ. Կան շէներ որ 4—5 տնէ կը բաղկանան. աստիճանաբար աւելի մեծ գիւղեր կը պարունակեն 30—40 մինչեւ 200 տուն։

Հ. Մէկ ընտանիք քանի՞ անդամէ կը բաղկանայ սովորաբար։

Վ. 20, 30, մինչեւ 60 հոգիէ բաղկացած ընտանիքներ կան։ 10 հոգւով տուն մի շատ թեթեւ ընտանիք կը համարիմք։ 20նոց ընտանիքներն հասարակ ընտանիք են։

Հ. Անցեալ տարուան արշաւանքէն ազատ մնացած գիւղերն շա՞տ են։

Վ. Կարելի է կէսն ազատ մնացին։

Հ. Սասնոյ հայ գիւղերն ընդ ամենայն 200 կը լինի՞ն։

Վ. Ոչ. այդքան չկան. բայց աւելի քան 100. զգալապէս աւելի։

Հ. Եթէ 110 կամ 120 գիւղ դնեմք և իւրաքանչիւր գիւղ, միջին հաշուով, 40 կամ 50 տնէ բաղկացած համարիմք, Սասնոյ մէջ իբր 100,000 Հայ եղած կը լինի։

Վ. Հաւանական է այդքան կայ։

Հ. Եթէ 10 կամ 12 հազարն ջարդուեցան և մի քանի հազարն ալ այլապէս կորան, տակաւին առատ նիւթ կը մնայ Սասունն վերահաստատելու։ Ուրեմն Սասունն ջնջուած լինելէ հեռի է։

Վ. Աստուած չանէ՛։ Բայց թափառող խեղճերն օգնութեան կարօտ են որ վե-

բագառնան չինել իրենց գիւղեր և վերահաստատուիլ իրենց սարերուն վերայ։

Հ. Այո՛, եթէ կողոպտուած, ջնջուած ընտանիքներն այդ 80 փոքր ու մեծ գիւղերէն հաշուեմք հինգ հազար, և ամեն մէկ ընտանիքին առ նուազն 20 լիրա օգնութիւն (որ չնչին գումար է, զի տուն պիտի չինէ, զգեստ, հաց, սերմնցու, եզ և ջորի գնէ), պէտք կը լինի հարիւր հազար լիրա։ Ատոր կ'աշխատիմք այժմ Ամերիկայում։ Կը յուսամք թէ Ամերիկայի մարդասէրներն աւելի առատաձեռն պիտի լինին քան Անգլիացիներն։...

ՌՈՒՍԻԱ, ԱՆԳԼԻԱ
ԵՒ
ՀԱՅԱՍՏԱՆ

Անգլիոյ Նախարարապետն, Լորտ Սալզպէրի, նոր Խորհրդարանին բացման նստին մէջ, գահաճառին առթիւ, խօսելով Հայկական Խնդրոյն վերայ, գործածեց այնպիսի ուժգին լեզու որպիսի, կ'ասեն բրիտանական թերթք, ոչ երբէք գործածած է անգլիական նախարարապետ մի նկատմամբ ոևէ օտար տէրութեան։ Լորտ Սալզպէրի պարզապէս ասաւ թէ «Սուլթանն ծանր և աղետաբեր սխալ մի գործած պիտի լինի եթէ, լոկ ձեւական անկախութիւն մի պահպանելու և իւր անուանական իրաւանց դէմ հնարաւոր ոտնձգութեան մի տեղի չտալու սիրով, մերժէ եւրոպական տէրութեանց օգնութիւնն ու իրատն՝ իւր տէրութենէն բնաբարձ անելու համար այն անիշխանութիւնն ու տկարութիւնն որ, հակառակ ամենայն դաշնագրաց և համակրանաց, անուշտ վերջապէս պիտի կործանէ զկայսրութիւնն որուն կը տիրէ նա։»

Նախարարապետին այս ծանր յայտարարութենէն քանի մ'օր յառաջ, ի Զէսթը, խօսած էր նախկին նախարարապետ Կլատսթոն ալ, երկու մեծ կուսակցապետներուն շրթունքէն մի զկնի միոյ արձակուող սպառնալիք հաշուեալ էին երկիւղ ազդել Համիտի, և բարեկարգութեան ծրագիրն որդեգրել տալ նմա։

Բայց հաշիւք սխալ էին. Սուլթանն նորէն մերժած է ծրագիրն, որպէս ծանոյց հեռագիրն։

Ի՞նչ դարձուածներ են ասոնք։ Պէտք է որ մեք Հայքս լաւ դիտեմք, լաւ ըմբռնեմք անոնց նշանակութիւնն և ըստ այնըմ շարժիմք։

Առաջին հարցումն զոր լուծել պէտք է, է այն թէ արդեօք Ռուսիա ի՞նչ կացք ունի հանդէպ Հայկական Խնդրոյն։

Ոմանք, տեսնելով Համիտի անմիտ դիմադրութիւնն երեք տէրութեանց առաջարկին, կը կարծեն թէ Սուլթանին գաղտ այժ տուող մի կայ, և այն է Ռուսիա։

Այդ կարծիք սխալ է։

Համիտի յամառութիւնն բնական է, և այն պարզ պատճառաւ որ Թուրքն երբէք իւր քրիստոնեայ հպատակաց վիճակն բարւոքելու առաջարկ ընդունած չէ լոկ խօսքի ուժով։ Յունաստանի, Ռումանիոյ և այլ քրիստոնեայ նահանգաց ազատումն թրքական լծէն՝ կատարուած է միշտ պատերազմի ուժով, յորում Թուրքն յաղթուած է։ Նոյն իսկ այն նշանաւոր ԽԱԹԹԵՐն զորս Սուլթանք հրատարակած են իրենց քրիստոնեայ հպատակաց հաւասարութիւնն ընդ միւսիւլմանաց հռչակելու և օրինականացուցանելու համար, անոնք անգամ հրատարակուած են յակամայից, պատերազմի հետեւանք։ Լիբանանու քրիստոնեայ վարչութիւնն ալ 1861ին կոտորածէն յետոյ եւրոպական զինուց միջամտութեան շնորհիւ հաստատուեցաւ։

Այս այսպէս լինելով՝ Ռուսիա Անգլիոյ հետ կը ձայնակցի Սուլթանէն խնդրելու որ բարեկարգութեան ծրագիրն ընդունի, բայց գիտէ թէ պիտի չընդունի։

Ռուսիա կ'ասէ Անգլիոյ.—Չասեր բայց ասել կ'ուզէ— Պարո՛ն, ես 1877ին մեծածախս պատերազմաւ ծեծեցի Թուրքն և իւր այն կակղցած վիճակին մէջ պայմանդրի Սան-Սթեֆանոյի դաշնագրով որ ռուսական զօրութիւն մնայ Հայաստանի մէջ մինչև որ բարեկարգութիւնք իրանան. Թուրքն ընդունեց։ Դո՛ւ էիր որ այն ատեն միջամտեցիր, թէ հարկ չկար, թէ դու ձեռն ի ձեռն տուած Թրքին, պիտի բարեկարգէիր Հայաստանն ու բովանդակ Թուրքիա։ Ահա թէ այժմ ինչ ողբալի վիճակի մէջ ինկած է բոլոր երկիրն և մանաւանդ հայկական գաւառներն։ Կը զգաս թէ դու պատասխանատու ես իրաց այս պարհուրելի կացութեան և կ'ուզես որ լոկ խօսքով, սրա-

մարմնութեան ուժով, Թրքին ընդունիլ տալ բարեկարգութեան ծրագիր և եւրոպական մասն առնել գործադրութեան մէջ։ Օ՛ն անդր, ես ալ քեզ հետ եմ խօսելու մասին։ Աստուած տայ որ Թուրքն զիջանի, բայց ես յոյս չունիմ։

Եւ Անգլիա Թրքին հետ կը վիճի, խըրատ կուտայ, կը սպառնայ, Կլատսթոն կը պոռայ, Սօլզպէրի կը կանչէ թէ Սուլթանն յիմարութիւն գործած կը լինի Եւրոպիոյ բարեացակամ խրատն մերժելով։

Եւ Համիտ իւր մերժումներով ասել կ'ուզէ Եւրոպիոյ— ի՞նչ կայ որ վրաս էք դարձեր. պատերազմ եղա՞ծ է. յաղթուա՞ծ եմ. երկիր կ'առնու՞ք ձեռքէս. ո՛չ. եւրոպական զօրք մտա՞ծ է կայսրութեանս ո և է մասին մէջ. ո՛չ. ուրեմն ի՞նչ կ'ուզէք ինէ, և ի՞նչ փոխարինութեան հաշուով կը պահանջէք որ Հայաստանի համար այդ կարեւոր զիջումներ յանձն առնում։

Խնդիրն ահա այդ վիճակին մէջ է այսօր։

Ի՞նչ պիտի լինի վաղն։

Շատ բան կախում ունի Լ. Սօլզպէրիէ։ Այս վարչապետ հմուտ է արևելեան խնդրոյն և Թրքասէր չէ։ Իւր արտաքին քաղաքականութիւն կորովի է։ Մանաւանդ այս անգամ իրեն թիկունք ունի խորհրդարանական ահագին մեծամասնութիւն և բովանդակ Անգլիոյ ժողովրդային կարծիքն ի նպաստ Հայոց։ Մինչեւ ցարդ խօսքի ուժն փորձեց, և տեսաւ թէ անօգուտ է։ Պարտաւոր էր այդ փորձն անել, թէև նախատեսած լինէր թէ պիտի վրիպէր։ Եւ ահա ժամանակ է որ բռնցի ուժով գործէ, եթէ խօսք կ'ուզէ զԹուրքն զգաստացունել։ Եւ բռնցի ուժի կիրառութեան դէմ ոչ մի եւրոպական տէրութիւն կրնայ բողոք բառնալ Անգլիոյ։

Բայց եթէ Սօլզպէրի այսօր երկնչի բուռն զօրութիւն ցոյց տալէ Թրքին, ինքն ալ «ծանր և աղետաբեր սխալ մի գործած պիտի լինի։» Վասն զի թէ անգլիական պատիւն և թէ շահն վտանգի տակ դրած պիտի լինի։ Հայոց մէջ և ի բովանդակ արեւելս՝ Բրիտանական ազդեցութիւնն պիտի իյնայ, ինչպէս արդէն ըսկսած է իյնալ։

Լ. Սօլզպէրի գիտէ անշուշտ,— պիտի զարմանայինք եթէ այդ մասին դեռ ունէ երկբայութիւն տածէր— թէ Հայկական Խնդրոյ լուծումն անյետաձգելի է։ Եթէ Հայաստանի գոհացում տրուի, այսինքն եւրոպական տնօրինութիւն մտցուի հոն, շատ բարերար ազդեցութիւն պիտի գործէ բոլոր Փոքր Ասիոյ վարչութեան վերայ, և Թուրքիա պիտի կրնայ իւր գոյութիւն շարունակել ցնոր տնօրինութիւն։ Բայց եթէ Հայոց արդար խնդիրքն մերժուի, ամբողջ Թուրքիա վտանգի տակ պիտի իյնայ։

Ահաւասիկ թէ ինչպէս։

Հայք, երբ համոզուին միանգամ թէ Անգլիոյ ջանքն ի դերեւ ելաւ և դեռ Թրքի անգութ ձեռքում պիտի թողուին, այլ ևս իրենք զիրենք զսպելու անկարող պիտի գտնուին . . . ։

Մեք պատճառ ունիմք կարծելու թէ շփոթութիւնք պիտի սկսին նախ ի Կ. Պոլիս, ուր Հայք չպիտի վախնան,— զի արդար կրիւք կատաղած ամբոխն վախ չգիտէ— յարձակողական դիրք առնուլ հանդէպ Թուրք կառավարութեան։ Բայց երբ Պոլսոյ Հայոց վերայ կըխօսիմք, այս պարագայից մէջ, Պոլսոյ բնիկ Հայքն չեմք նշանակեր, այլ Հայ գաւառներէն եկած պանդուխտ Հայոց ահագին ամբոխն աւել կ'ուզեմք, որք իբրեւ գաւառացի կը ցաւին ու կը խորհին, և ճշմարիտ ներկայացուցիչքն են գաւառաց։ Ահա այդ ամբոխի սոսկալի զայրոյթն պիտի պայթի Թուրք կառավարութեան գլխուն։ Եւ դժուար է գուշակել թէ անմիջական արդիւնքն ինչ կը լինի։ Այդ ամբոխն ոստիկանութեան ուժն պիտի արհամարհէ, հարկ պիտի լինի զօրաց դնդեր հանել նոցա դէմ։, և ամբոխն այս անգամ կատաղաբար պիտի մարտնչի զօրաց դէմ։ Այս պայմանաց մէջ ընդհարումն երկար պիտի տեւէ, և դժուար չէ երեւակայել այն ծանր պատահականութիւններն որք կրնան Կ. Պոլսոյ եւրոպական գրաւում մի հարկաւոր գործել։

Գաւառայ մէջ ուրիշ կերպ ժխորմունք տեղի պիտի ունենան։ Ասինք թէ ի մայրաքաղաքին Հայք յարձակողական դիրք պիտի առնուն. ի գաւառս նոցա դիրք պիտի լինի անձնապաշտպանի դիրք։ Պատճառն յայտնի է։ Կ. Պոլիս Եւրոպիոյ աչքին առջեւ է, Թուրքն չի կրնար Հայերն սպառելու չափ ջարդել. Տէրութիւնք մէջ կը մտնեն, մանաւանդ որ շատ ալ եւրոպական ժողովուրդ կայ հոն։ Գաւառաց

մէջ կացութիւնն տարբեր է· հոն Թուրք խաժամուժն կրնայ, Եւրոպայէն անարկիւղ, ամեն ծայրայեղութիւն գործել, կին, մանկտի խողխողել, կանոնաւոր զօրքն ալ իրեն օգնական ունենալով։ Այդ խժդժութեանց լուրն շատ ուշ կը հասնի Եւրոպա և ոչ է անմիջական օգնութիւն անկարելի կը լինի հասցուցանել քրիստոնէից։ Ուրեմն գաւառի Հայք կը զինուին, կը պատրաստուին այժմ, կը կարծեմք, որքան կատարելապէս որ կրնան, որպէս զի Թուրքք իրենցմէ պատկառին, և զի, երբ մահմեդականք զիրենք ջարդելու ելնեն, կարող լինին Հայք անձնապաշտպան լինիլ կամ չափով իւիք զսպել իսլամաց կատաղութիւնն։

Զիարդ և իսկ շատ Հայեր պիտի ջարդուին այդ ժխորմանց մէջ, և ոչ սակաւ Տաճիկներ։ Պոլսոյ և գաւառաց այդ անիշխանական վիճակ և արիւնայեղութիւնք պիտի ստիպեն գեւրոպա միջամտել, և շատ հաւանական է որ Ռուսիա լինի միակ կամ գլխաւոր միջամտողն զինու զօրութեամբ ի գաւառս։

Թէ ինչ կը լինին վերջնական հետեւութիւնք այդ ամենուն դժուար է գուշակել լիովին։ Սակայն կարելի է ընդհանուր կերպով ասել թէ արդիւնքն կրնայ շատ կամ քիչ ընդարձակ և հեռահաս լինիլ։ Կրնայ լինիլ որ Թուրքիա բաշխուի տէրութեանց մէջեւ, Փոքր Ասիոյ մէկ մասն միայն թողլով Թրքաց,—այն մասն ուր Համիտ Գաղթական մահմեդականներ կը յղէ կը տեղաւորէ տարիներէ ի վեր, գուշակելով այս հնարաւոր պատահականութիւն։

Թէ այդ բաշխման միջոցին ի՛նչ անօրինութիւն կը լինի Հայաստանի մասին, այն մեծապէս կախումն պիտի ունենայ մեր գործունէութենէն մինչև այն ատենեթէ այժ, կորով, խելք, քաջութիւն, իրաւասիրութիւն ցոյց տուած լինելով՝ պատկառելի և յարգելի հանդիսացած լինիմք, կրնամք ունենալ ինքնօրէն Հայաստան մի։

Համառօտ ասելով՝ այժմ մեր, Հայոց, ձեռքն է Հայաստանի բաղդն որոշելու թանկ պատեհութիւնն։ Մասնաւորապէս Պոլսոյ Հայոց ձեռքն է ստիպել, բռնադատել գեւրոպա որ տեսնէ մեր դատն և ազատէ զմեզ բարբարոս Թրքի ուղղակի իշխանութենէն, այն իշխանութենէն որ եթէ, Աստուած մի արասցէ, նորէն ազատ թողուի մեր վերայ թափելու իւր խեռ և խօլ ատելութիւն, բովանդակ Հայաստանն կը ջնջէ կը սպառէ շարս կամ հինգ տարուան մէջ։

Եւ մեք որոշած եմք այս անգիւտ պատեհութիւն չթողուլ որ անցնի ապարդիւն։

Մեր Ազգի վերայ դէպքերու անողոք բերմամբ սրբազան պարտք դրուած է անյողդողդ քայլերով դիմել այժմ մահուան կամ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

(Մեր յատուկ թղթակցէն)

Կ. Պոլիս Օգոստ. 8, 1895

Սախտ ընդունած էր Մեծ Եպարքոսութիւնն պայմանաւ որ՝ ինքն պիտի լինի միջնորդ ընդ մէջ Սուլթանին և նախարարաց· թէ Սուլթանի բոլոր հրամաններն իւր բովէն պարտ էին անցնիլ· թէ նախարարք իւր միջոցաւ միայն ներկայացնելու էին Սուլթանին իրենց առաջարկներն· թէ պաշտօնէից անուանումն իրեն յատուկ պիտի լինէր ևն։ Սուլթանն բազմիցս մեղանչեց այս պայմանաց դէմ· Սախտ իւր պարբերական հրաժարականներով կը յուսար ազդել Սուլթանին վրայ, այլ ի զուր, այս միջոցն անբաւ եղաւ։ Սախտ որոշեց գործնականապէս ազդել, և երբ վերջերս զնազըմ կը տեսնայ կայսերական պալատ կը հարցնէ թէ ինչո՞ւ եկած է· «առօրեայ տեղեկագիրս մատուցանել» կը պատասխանէ· Սախտ բարկութեամբ կըսէ «ես եմ Սուլթանի քաղաքական փոխանորդն՝ որպէս Շէյխ-Իւլ-Իսլամն է կրօնական խնդրոցն· ամեն խնդիր ու տեղեկագիր մեզ ներկայանալու են և մենք մատուցանելու եմք Սուլթանին, և դուք երբէք յարաբերութիւն ունենալու չէք։ Գնա կորսուէ ատսի, և յայսմ հետէ ինձ ներկայացուր տեղեկագրերդ։» Նազըմ կը հետեւի Մեծ Եպարքոսի հրահանգին· երկու օր չտեսնուիր պալատն· Սուլթանն կանչել տալով կը տեղեկանայ և ըստ առաջնոյն իւր տեղեկագրերն իրեն բերել կը պատուիրէ։ Սախտ զայս իմանալով՝ խիստ լեզուաւ հրաժարագիր մը կուտայ· Սուլթանն կը բարկանայ, կը կոչէ Ֆեամիլ փաշան, և անոր կ'առաջարկէ ընդունիլ եպարքոսութիւնն։ Ֆեամիլ կը մերժէ, և ներկայ պարագայից մէջ Սախտն իրմէ յարմար ցոյց կուտայ։ Սախտ կը շարունակէ իւր պաշտօնն, Սուլթանն փոքր ինչ փոխած է իւր ընթացքն և եթէ իւր իշխանութիւնն ի չարն գործածէ, Սախտ և Թուրխան փաշայ միանգամայն պիտի հրաժարին կ'ըսուի։

Մակեդոնիոյ յուզումներն մատմբ վերջ գտան։ Պուլկարիոյ Ռուսամոլ և Ռուսատեաց երկու կուսակցութիւններն երթալով կը գօրանան։ Թուրքն մեծապէս կ'օգնուի այս ներքին երկպառակութենէն։

Աստրիա մեծապէս նպաստեց Մակեդոնիական խնդրոյ հանդարտման։

Իմացաք անշուշտ Յուլիս 23ին 1200ի չափ հայ բանտարկելոց ազատ թողուին։ Սոքա արդէն անմեղներ էին։ Հայկական Խնդրոյն ի նպաստ աշխատողներէն 100 երիտասարդներ բանտերու մէջ են դեռ։

Սալղպէրի տեսնալով թէ՝ Թուրքերն իւր կառավարութեան համբերատարութիւն ի չարն կ։ գործածեն, 25ին հեռագրեց Պոլսոյ անգլիական դեսպանին, փութացնել տալ Թրքաց պատասխանագիրն։

Դեսպանն տեսակցութիւն մ'ունեցաւ յաջորդ օրն Սուլթանին հետ, որ քիչ ժամանակէն իրենց պատասխանագրի սըրուիլն ծանոյց։ 1 Օգոստոս Նախարարաց խորհուրդն կը ներկայացնէ ծրագրի մի քանի յօդուածներու մասին ընդարձակ դիտողագրեր։ Սուլթանն յաջորդ օրն կը յայտարարէ թէ կ'ընդունի ծրագիրն ի բաց առեալ 4 յօդուածներն. ա. բարեկարգութիւնք ողջոյն Փոքր Ասիոյ համար ընել և ոչ թէ Արեւելեան մի քանի հայաբնակ գաւառաց. բ. Պոլսոյ մնայուն հսկող քոմիսիոնի պէտք չկայ. գ. Գաւառաց բարձր քոմիսէոն Սուլթանն պիտի անուանէ և առ այս պէտք չկայ եւրոպական միջամտութեան. դ. թէ անհնար է Համիտիյէ զօրաբանակներն զինաթափ ընել։ Որպէս կը տեսնուի Թուրքերն իրենց կանխաւ տուած պատասխանագրի իմաստին կը դառնան և ներկայացեալ ծրագրի 4 կարեւոր յօդուածներն կ'ուզեն ջնջել։ Օգոստոս 3ին այս իմաստիւ թուղթեր կ'ուղղուին Անգլիոյ, Գաղղիոյ և Ռուսիոյ դեսպանաց։ Այս երեք կառավարութեան կողմանէ պատասխանի կ'ըսպասուի։

Շնորհիւ ջանից Ս. Պատրիարք Հօր, Սսոյ թեմին վերաբերող երեք ըմբոստ եպիսկոպոսաց ձեռնարկն ի դերեւ ելաւ և քիչ ատենէն Ալէքսիանն Սրբազան Սիս պիտի երթայ և անդ կաթողիկոս ձեռնադրուի։

Կարգուրաց Մամբրէն վերջապէս զարնուեցաւ Օգ. 3ին (Ն. տ.) և սատկեցաւ այս առաւօտ։

Վահան վարդապետ Տէր-Յակոբեան Նաղբի գործիք մի վատ մատնիչ ըլլալն հրատարակուեցաւ։ Շատեր այդ անձն հայրենասէր կը կարծէին։ Պատրիարք Հայրը քննութիւն բացած է։

ԾՈՎ

Մի տխուր իրողութիւն

Թուէս երեք ամիս առաջ «Հայքի» բաժանորդաց ցանկն հրատարակեցինք, յորմէ տեսնուեցաւ թէ Միացեալ Նահանգաց մէջ 198 տարեկան և 36 վեցամսեայ բաժանորդներ կային։ Այդ թիւ շատ խեղճուկ էր։ Կոչում արինք, և Տիգրան Սիւնի մեզ ձայնակցեցաւ, որ բաժանորդաց թիւն գոնէ 400ի բարձրանար, որպէս զի կարենար թերթս հրատարակուիլ ամիսն երկու անգամ։

Այժմ պատրաստ եմք ցոյց տալ թէ այդ հրաւէրներու արդիւնքն ինչ եղած է ցայսօր։

Այժմ, իններորդ ամսոյ սկզբան, Հայք ունի բովանդակ Միացեալ Նահանգաց մէջ 259 բաժանորդ։ Այսինքն 400էն 150 պակաս։

Ուրիշ երկիրներէ եկած բաժնեգներն են 42։ Սոնց 17ն Բարիզէն են, (Բարիզ առաջին տեղն բռնած է միշտ) 13ն Եգիպտոսէն և մնացած 12ն այլ և այլ երկիրներէ։ Պուլկարիա այս տարի, իւր հագարաւոր Հայերով, կը գրաւէ խղճալի տեղ մի մեր ցանկին մէջ— ոչ անուններու ցանկին մէջ, զի 43 հասցէներու կը յղուի Հայք, այլ վճարուածներու ցանկին մէջ։

Սուրապայայէն (Ճավա) մի քանի բաժանորդ միայն ունիմք, սակայն Տ. Օ. Ք. յղեց 25 տոլար անցեալ Ապրիլին և «Խրախուսական Միաբանութիւնն» 10 տոլարով այդ հեռաւոր հայրենակիցներ դարձեալ ապացուցած եղան իրենց անկեղծ համակրութիւնն Հայքի հրատարակութեան համար։

Այս օգնութեանց բացառիկ ցոյցերն երախտագիտութեամբ յիշելէ յետոյ, թոյլ կուտամք մեք մեզ անել այն տխուր խոստովանութիւն թէ Հայք չարաչար անհոգութեան առարկայ մ'է մեր գաղթականութեանց մեծ մասին մէջ։

Եւ այս բան աւելի տարօրինակ կերեւի երբ յիշեմք թէ Հայք առ հասարակ շահեկանութիւն ունեցող թերթ մի կը նկատուի և շատ ախորժով կը կարդացուի ամեն տեղ։ Մեր բաժանորդներէն ոմանք մինչև անգամ կը խնդրեն որ իրենց 2 օրինակ յղեմք, վասն զի իրենց օրինակն, կ'ասեն, ուրիշներ կ'ուզեն կար-

դալու համար, և ձեռքէ ձեռք կը պտըտցունեն օրերով։

«Հայք» կարդալու այդ եռանդն մեզ կը թուի բնականապէս ուրախալի երեւոյթ։

Բայց երբ կը նայիմք մեր հաշիւներուն և կը տեսնեմք թէ իբր 500 տոլար բաց կը մնայ այս տարի, կը ստիպուիմք նորէն կանգ առնուլ և հարցնել թէ այս ի՞նչ կը նշանակէ։

Ի՞նչ կը նշանակէ կարեւոր պարբերականի մի բացն խմբագրին բեռցունել, քանի որ 500 տոլար տալն ազգին համար չնչին բան է, իսկ խմբագրին համար ահագին։

Եգիպտոսի, Անգլիոյ, Ֆռանսայի մեր հայրենակիցներուն մէջ կան հարուստ անհատներ, որոց ամեն մէկն կարող է,՝ առանց նեղուելու, 100, նոյն իսկ 500 տոլար նուիրել ազգօգուտ հրատարակութեան մի համար։

Գիտեմք թէ արդ կարող անհատներն տալու տեղ շատ ունին, և մեր մտածութենէն հեռու է ենթադրել թէ տալու առաջին տեղն, յիշուելու առաջին արժանաւորն «Հայքն» է· բայց և ոչ առանց ցաւի կը գիտեմք որ գրեթէ բոլորովին մոռացութեան կը տրուի այս հրատարակութեան օգնելու պարտաւորութիւնն։

Կարելի էր մեզ խնայողութիւն անելամիսն անգամ մի հրատարակելով և միայն 8 երեսէ բաղկացած· սակայն նիւթն այնքան առատ է և այնքան կարեւոր, մանաւանդ այս տարի, որ չեմք կրնար այլապէս վարուիլ։ Շաբաթն մի անգամ հրատարակելու լինէինք, դարձեալ տեղն նեղ պիտի դար։

Ուրեմն անգամ մ՚ալ կը դիմեմք մեր զգայուն և հասկացող ազգանոց կարող դասուն, խնդրելով որ իրենց օգնութեան ոյն կարկառեն մեզ, ոչ զմեզ նիւթապէս վարձատրելու, այլ այս թերթի հրատարակութիւնն հնարաւոր գործելու։

Կը փափաքինք որ քաջալերելու յօժարողներն փութացունեն իրենց օգնութիւնն։

Ոմանք տալար թղթադրամ կը յղեն մեզ նամակի ծոցով, որ երբեմն կը կորսուի։ Պէտք է կա՛մ Բէճիսթրը անել նամակն կամ մընի օրտըր յղել առ ի ապահովութիւն։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿՆ

Թուրքիոյ իրական տիրապետութիւնն ի Հայաստան կը սկսի 1847ին, երբ Օսման փաշա վերջին մահացու հարուածն տուաւ Քուրդ Տէրէպէկիներու դարաւոր իշխանութեան հարաւ-արեւելեան հինգ գաւառաց մէջ (Վան, Բաղէշ, Մուշ, Պայազիտ, և Տիարպէքիր)։ Այդ իբր յիսուն տարուան երկար միջոցին կրնամք երկու որոշ շրջան նշանակել· մին՝ ամօթալի չարաւարութեան (1847—1891), և միւսն՝ պարզ ջնջման շրջան։ Առաջին դրութենէն աղբերացող դեղծմանց դարման կրնայ բերուիլ համոզղութեամբ կամ սպառնալեօք· երկրորդին դէմ միայն ոյժն կը զօրէ բան մի կատարել։

Յամին 1891, Բ. Դուռն՝ Հայաստանի մէջ բարեկարգութեանց խոստացեալ ներմուծմամբ ծանր վանդներէ և պատերազմի ատեն ռուսական սահմանագծի վերայ բնակող քրիստոնէից թշնամութենէն վախնալով, որոշեց մէկ քարով երկու թռչուն զարնել, և ստեղծեց Համիտիյէ մականուանեալ հեծէլազօրքն, միայն քրդերէ բաղկացած։ Կայսրութեան բարձրագոյն պաշտօնէից ոմանց կողմանէ երկասիրուած ծրագիրն էր թէ սահմանագծի հողերէն արտաքսել պարտ է զՀայս, օրինակի համար, Ալաշկերտէն, և իրենց տեղն մահմետականներ բնակեցունել, և Հայոց թիւն մեծապէս զեղջել բոլոր հինգ գաւառաց մէջ, այնպէս որ հոն մասնաւոր բարենորոգումներ մտածելու պէտք չըմնայ, և որ, ի դիպել պատերազմի, Քուրդ հեծելազօրքն հակակշռեն ռուս խաղախներն։

Ջնջման այս պարզ քաղաքականութիւնն հաւատարմօրէն ի գործ դրուած և մեծապէս ընդարձակուած ալ է այն օրէն ի վեր, և եթէ շուտով կասեցունել չարուի, աներկբայ պիտի առաջնորդէ Հայկ· Խնդրոյն վերջնական լուծման։ Բայց լուծում մի որ պիտի անպատուէ զքրիստոնէութիւն և ծարը ու ծանակ անէ զքաղաքակրթութիւն։

Ջնջման ծրագիրն ի գործ դնելու մէջ առաջին քայլն էր աղքատացունել ժողովուրդն յատուկ միջոցներու յարադրութեամբ մի։ Թահսին փաշա, Բաղէշի վեր-

ջին նահանգապետ, լաւ նմոյշ մ՚է ջնջման շրջանի բարձր Թուրք պաշտօնատարաց։ Նա մշակեց զուավորութիւն տանելու հարուստ Հայեր բանտարկելու, առանց ոև է ամբաստանութեան կամ պատրուակի։ Ապա ազատութիւն կ՚ընծայէր նոցա սարսափելի գնով որ նոցա ստացուածոց մեծագոյն մասն կը ներկայացունէր։ Որոնք որ մերժէին վճարել գինն, կ՚ենթարկուէին ահաւոր տանջանաց։ Ոմանք կանգուն կը պահուէին բոլոր ցայգ և ցերեկ, չշարժելու, չուտելու և չխմելու պայմանաւ։ Եթէ ուժասպառ իյնային նուաղած, ցուրտ ջուր կամ ջեռուցած երկաթ կ՚ուշաբերէր զնոսա։ Բաղէշի նահանգում հարիւրաւոր Հայեր որք դրամ, արջառ կամ հունձք ունէին, կամայական այս դրութեան համեմատ բանտարկուեցան և խոշոր գումարներ վճարելով ազատ թողուեցան։ Ոմանք դրամ չունէին և չէին կրնար հայթայթել իսկոյն, վասն որոյ զնդանում մնացին երկար, մինչև որ կամ դրամ գտան կամ մեռան։ Իբր 100 հոգի այսպէս մեռան միայն Բաղէշի բանտին մէջ։

1890ին Պուլանըխի Օտանճոր գիւղի գիւղապետ, Ապտալ, ընչեղ ոք էր, ունէր 50 գոմէշ, 80 եզ, 600 ոչխար, թո՛ղ ձիանն և այլն։ Իւր գերդաստանի կանայք կը կրէին ոսկի զարդեր, և ինքն տարեկան 50 լիրա տուրք կը վճարէր տէրութեան։ Այդ էր 1890ին։ 1894ին նա անանկ չքաւոր մ՚էր, թշուառութեան ընտանեցած և ի վտանգի անսուաղ մեռնելու։ Իւր գիւղն և բոլոր գաւառակն կողոպտուած էին, և բնակիչքն մերկացուած, ի զմայլեալ գողութիւն Թուրք իշխանութեանց։ Ընթացս 1894 ամին, միայն Պուլանխի և Մշոյ գաւառաց մէջ, Քուրդք աւելի քան 10,000 գլուխ արջառ և ոչխար քշեցին տարին։

Այս նորաձև մեթոտն բոլոր երկրին մէջ գործածուեցաւ, և արդիւնքն այն եղաւ որ հարստութիւնն իսպառ անհետացաւ և չքաւորութիւնն արագապէս ծաւալեցաւ, ա՛յնքան խիստ, ա՛յնքան անդարմանելի, ա՛յնքան զզուելի իւր բարոյական և ֆիզիքական ազդեցութեամբք որ իւր զոհերու ոմանց ներշնչած է զայն վայրենի՝ գրեթէ կատաղի՝ քաջութիւն, որ միշտ ծնունդ կ՚առնու ի յուսահատութեան։

Ի սկզբան Հայեր գանգատի կ՚երթային երբ իրենց ազգականք կամ բարեկամք սպաննուէին, յուսալով թէ ինչ ինչ դէպքերու մէջ օրինաց բազուկն թերևս բարձրանար պատժելու ոճրագործներն և այսպէս զսպողական ազդեցութիւն գործելու այլոց վերայ որք նոյնն անելու տրամադիր կրնային լինիլ։ Սակայն նոքա այս սովորութենէն շուտով հրաժարեցան, շնորհիւ այն մեթոտներու որոց մասին գաղափար մի կուտայ հետևեալ դէպքն։ 1892 Յուլիսին, Ահմէտ Օղլու Պաթալ անուն Քուրդ մի ձին քշեց եկաւ ի Կովանտուք (Խնուսի գաւառում) և Մուխօ անուն Հայու մի չորս եզներն յափշտակեց։ Այդ ատեն դեռ քրիստոնէից զէնք կրելու արգելքն վերջին խստութեան հասած չէր, և Մուխօ րիվօլվէր մ՚ունենալով և տեսնելով որ Քուրդն զիւրն գործածելու վերայ էր, կրակեց։ Երկուքին հրազէններն ալ միահաղոյն պարպուեցան և երկուքն ալանդէն ինկան մեռած։ Ցայնժամ տեսէք ինչ եղաւ հետևանքն։ Գիւղէն 19 Հայեր, որոնցմէ ոչ ոք տեղեակ էր դէպքին, ձերբակալուելով ի բանտ նետուեցան, և իմաց տրուեցաւ իրենց թէ ծանր կաշառք տալով միայն կրնան արձակուիլ։ Տասնն վըճարեցին կաշառքն և ազատեցան իսկոյն։ Մնացեալք, մերժելով, բանտարկեալ մընացին ընդ երկար։ Բրդերուն բնաւ դըպչող չեղաւ։

1893 Օգոստոսին Ճիպրանցի Քուրդք զարկին Բաղքիկ գիւղն, կողոպտեցին զայն, և Յովհաննէս անուն վաճառական մի վիրաւորեցին, որ զբաղած էր գործով իւր խանութին մէջ։ Հետևեալ օրն Օհաննէս դիմեց գայմագամին ի Խնուսաբերդ, և բողոքեց. ասոր վերայ գայմագամն բանտ դրաւ զնա իբրև «ստախօս»։ Այն նեղութիւններն որոց ենթարկուեցաւ հէքն այդ ժանտախտաբնակ բանտում, հաւատքի սահմանն կ՚անցնին, բայց այդ ուրիշ պատմութիւն է։ Ութ օր յետոյ նորա դրացիք Քուրդ մի բերին գայմագամին առջև որ հաստատեց նոցա վկայութիւնն թէ Օհաննէս արդարև վիրաւորուած էր որպէս նոքա կը պատմէին, և թէ սուտ չէր խօսած։ Ցայնժամ, և միայն յայնժամ, իշխանութիւնք թոյլ տուին այդ մարդոց. տասն լիրա կաշառք վճարել որ վիրաւորուած մարդն ազատ արձակուի։

1894 Մայիսին, 12 հեծեալ Համիտիյէներ յարձակեցան մեր գիւղի վերայ, կը պատմեն Բրդապօղցիք (Բասենի մէկ

գիւղն), և բռնեցին մեր երէցն, զՏէր Դաւիթ։ Խոստացան արձակել զինքն եթէ վեց լիրա վճարէր։ Եւ նա փոխ առաւ այդ գումար տուաւ իւր առեւանգողաց և ազատեցաւ։ Զօրքն կրակ արին միւն գիւղացւոց վերայ, և փախուցին։ Հետևեալ օրն կիլ Պէկ գնաց ի Հասանգալէ բողոքել կառավարութեան։ Պաշտօնեայք նախատեցին զինքն, ստահօս կոչեցին և բանտարկեցին։ Այդ դժոխարոյր ծակի մէջ 40 օր մնալէ յետոյ, եօթն լիրա կաշառք վճարելու արտօնութիւնն ունեցաւ և տուն գնաց։

Բայց երբ Քուրդ մի կամ թուրք մի զոհ լինի մի «ոճրի», կամ նոյն իսկ մի արկածի, կառավարական պաշտօնէից ջանադրութիւնն սահման չի ճանաչեր։ Անցեալ տարւոյ գարնան, հալքի ատեն, երբ ջուրք կը բարձրանան, անինչ Քրդերու խմբակ մի Հիւսնաքարի մօտ կ'աստանդէին գետն ի վեր։ Գետն անցնելու փորձին մէջ քշուեցան հոսանքէն և գետամոյն մեռան։ Անդէն՝ գիւղացիք ամբաստանուեցան թէ իրենք էին սպաննած զՔրդերն, և չորս հայ երեւելիք ձերբակալուած նետուեցան Հասանգալէյի բանտն։ Անդ եօթն կամ ութ ամիս տառապելէ յետոյ՝ գիւղացիներուն իմաց տրուեցաւ թէ կրնային ազատիլ եթէ 75 լիրա վճարէին։ Դրամն ճարով հայթայթեցին և պաշտօնէից ափն դրին, և պրծան բանտէն։ Եւ ինքնս տեսայ անոնց երկուքն, զԱդամ և զՏօնս։

Հետևեալն թարգմանութիւնն է մի վաւերագրոյ զոր քովս ունիմ, ստորագրուած և կնքուած Մելիքանի (Քեղի) բնակիչներէն, անցեալ Մարտ 26ին։—

«Երկար ատենէ ի վեր չորս կամ հինգ ոստիկանք, որոց պաշտօն տրուած է կայսերական տուրքերն հաւաքել, ընտրած են մեր գիւղն իրենց կայան, և կը բռնադատեն շրջակայից բնակիչներն գալ հոս և հաստուցանել իրենց տուրքերն։ Այս զապթիյէներն կ'ուտեն, կը խմեն և իրենց ձիաներն կը կերակրեն մեր ծախիւք, անպատրուակ ցոյց տալով թէ որոշած են զմեզ դատապարտել մուրացկանութեան։

«Վերջերս եօթն ուրիշ զապթիյէ, որք տուրք հաւաքելու պատճառանք իսկ չունէին, մտան մեր գիւղ, ծեծեցին բնակիչքն, նախատեցին քրիստոնէական կրօնն, և անպատուեցին մեր կանայքն ու դստերքն, և ապա բռնեցին երեք մարդ որք բողոքեցին,— Պօղոս, Մարտիկ և Գրիգոր— կրկին շղթայիւք կապեցին և գլխիվայր կախեցին զնոսա գերանէն։ Թողուցին զեղկելիներն այնպէս կախուած մինչև որ նոցա ռնգունքէն արիւն հոսիլ սկսաւ։ Այս հէքերն հետևապէս հիւանդացան։ Զապթիյէներն, սակայն, հրապարակաւ յայտարարացին թէ ինքեանք այնպէս արին գիւղացւոց՝ հնազանդելով ոստիկանապետին յատուկ հրամանացն։

«Վասն որոյ կայսերական արդարութեան կը դիմեմք փրկել զմեզ այս անկրելի վիճակէն։

«Բնակիչք Մելիքան գիւղէն, Քեղիի Գաղայէն։

«26 Մարտ, 1895։ (ստոր.) ԽԱՉԵՐ»

Ահաւասիկ ուրիշ աղերսագիր մ'ալ, նոյն գաղայի մէկ ուրիշ գիւղէն։—

«Թիւ մի Զապթիյէներ, տուրք հաւաքելու պատրուակաւ, մեր գիւղն եկան ժամ 5ին, մեր բնակարանաց դրունքն խորտակեցին մտան ներքին սենեակներն, բռնեցին մեր կանայքն ու տղայքն, որք կիսամերկ վիճակի մէջ էին, և նետեցին զնոսա իրենց անկողիններուն հետ դուրս փողոցն։ Ապա ծեծեցին ու քաշկռտեցին զնոսա ծայրագոյն անգթութեամբ։ Վերջապէս մեր կանանցմէ իբր 30 հոգի ընտրեցին, փակեցին զնոսա ախոռի մի մէջ, և նոցա վերայ ի գործ դրին իրենց եղեռնական կամքն։ Մեկնելէ առաջ առին մեր բոլոր ապրցուն և խոտն, ինչպէս իրենց անվրիպելի սովորոյթն է։ Կը խնդրեմք ձեր ուշադրութիւնն հրաւիրել այս իրողութեանց և կը հայցեմք կայսերական զթութիւնն։

«Բնակիչք Արեգ գիւղի, Քեղիի Գաղա։

«(Ստոր.) ՄՈՒՐԱՏԵԱՆ, ՌԷՍԵԱՆ, ՊԷՌՂՕՑԵԱՆ, ՄԵԼՔՈՆԵԱՆ։

«26 Մարտ, 1865»

Գէորգ Վարդանեան, Մանկասար գիւղէն (Սանճագ Ալաշկերտի) հաւաստեց, ի միջի այլոց, հետևեալն։ 1892ին Անասն անուն Քուրդ մի, ուստր Քէրէվաշի, (Շալար ցեղէն), իւր ընկերներով եկաւ յիմ տուն և առաւ հինգ լիրաս զոր խնայած էի սերմնցու գնելու համար։ Գանգատե-

ցայ իրեն դէմ, բայց կառավարութիւնն արհամարհանօք վռնտեց զիս։ Անտօն, լըսելով թէ զինքն պատժել տալու փորձ էի արած, գիշեր մի եկաւ 12 հոգւով, մեր տանիքն ելաւ և լուսամուտէն վար նայելով կրակեց։ Իմ հարս, Եղեք, գընդակահար ինկաւ մեռած։ Նորա երկու ուստերքն և իմ փոքրիկս Միսաք նոյնպէս մեռան անդէն և անդ։ Ցայնժամ Քրդերն մտան ներս և կարասին, հանդերձեղէններըն, չորս եզն և չորս կով առին տարին։ Ես ճեպեցի ի գիւղն Գարաքիլիսէ և գանգատեցայ Ռահիմ փաշուն։ Սա, լսելով իմ պատմութիւն, ասաւ. «Համիտիյէ Քուրդք Սուլթանին զօրքն են։ Այդպէս անելու իրաւունք ունին նոքա. Դուք Հայքդ ստախօս էք։» Եւ զմեզ բանտարկել տուաւ։ Մինչև որ 2 լիրա կաշառք չտուինք չկըրցանք ազատիլ։

1890 Յունիսին, Ալիճիքրէք գիւղն տեսարան էր կրկին ոճիրներու։ Իպիլ Օղլի Իպրահիմի Քրդերն իրենց հօտերով եկան և հայ հովիւներն վանեցին իրենց գիւղապատկան արօտներէն։ Հայոց հովիւներն հաւար ձգեցին գիւղն, և 4 երիտասարդք վազեցին որ հասկցունեն Քրդերուն թէ արօտն իրենցն էր։ Բայց հազիւ հասած էին նոքա ի վայրն երբ Քըրդերըն կրակել սկսան և սպաննեցին երիտասարդաց մին, զՑովսէփ։ Ուրիշ մ'ալ մահացու վէրք առած ինկաւ, իւր անուն՝ Յարութիւն։ Իրենց ընկերք սարսափահար փախան գիւղն. ժողովուրդն, չուարած, թողուց գործն, և երէցն ու գլխաւորներէն ոմանք վազեցին սճրի վայրն, մինչ այլք ճեպեցին լուր տանիլ ոստիկանաց։

Ոստիկանք, պաշտօնէիւ հանդերձ, չուտով հասան ի վայրն։ ԶՑովսէփ մեռած գտան, և երէցն, Տէր Օհաննէս, հաղորդ տալու զբաղած հոգեվարք Յարութիւնի։ Հրամայեցին որ ազօթքն դադրեցունեն և սպառնալեօք հարցան, «ո՞ւր են քուրդ ոճրագործներն։» «Փախան» պատասխան արուեցաւ։ «Իրա՞ւ, հաւանական է դուք, չնուրբիք, սպաննեցիք անոնք և գաղտուկ թաղեցիք։ Դուք իմ կալանաւորներս էք։» Եւ դառնալով առ երէցն, «Դո՛ւ ալ եկ,» հրամայեց։ Եւ ամենքն սարսուեցան Հասանգալէ և ձգուեցան պժգալի բանտն։ Ժամանակ մի յետոյ փոխադրեցան Կարնոյ բանտն։

Տէր Օհաննէս բարեկեցիկ ոք էր։ Կանոնաւոր ազգատացուցման դրութիւնն դեռ նոր ձեռք առնուած էր այն ատեն։ Իւր կարապետ եղբայր և իրենց տան թշուառ բաղդընկերներ նոյնպէս ընչեղ էին, և պաշտօնէից բաղձալի թուեցաւ որ նոցա ինչքն ուրիշ տեսրց ձեռքն անցնին։ Ուրեմն թողուեցան նոքա գարշահոտ բանտում ընդ երկար, այնպէս որ բոլորովին մոռցուած կ'երեւէին։ Նոցա ընտանիք երկիւղի անվերջ տագնապով կը տառապէին, գործերն ի սպառ երեսի վերայ թողուած էին, և առողջութիւնն քայքայուած։ Այս դժոխըմբեր վիճակում մնացին տարի մի—իրենց կենաց էն ահաւոր միջոցն։

Ցայնժամ նոքա խոնարհաբար աղաչեցին իրենց հալածիչներն չնորհք անել նըշանակել ազատութեանն գինն։ Գնոյն մասին համաձայնութիւն գոյացաւ և խրատուին պաշտօնեայք Քուրդ յղել ի խնդիր ոճրագործ Քրդերուն զորս իրենք սպաննած լինելու ամբաստանութեան ներքև էին։ «Եթէ անոնք գտնուին, դուք ազատ կ'արձակուիք։» Այս խրատն և անոր գործադրութեան միջոցներն 400 լիրայի նըստան, գումար, զոր բանտարկեալք ստիպուած էին 100ին 40 տոկոսով փոխ առնուլ։

Հետախուզութիւնն անշուշտ յաջող եղաւ. զի քուրդ ու թուրք ոճրագործներ, եթէ իրենց գոհերն քրիստոնեայ են, պէտք չեն զգար իրենք զիրենք պահելու։ Այս ընդ խնդրով դիւցազներն գտնուեցան Ալաչկերտի Համիտիյէ հեծելազօրաց մէջ. և խոստովանեցան ու չժխտեցին, և բազմութիւն մահմետական վկայից եկան դատարանին առջեւ վկայել ի նպաստ հայ բանտարկելոցն, որք անդէն արձակուեցան, յընչից և յառողջութենէ ինկած։ Դատարանին վճիռն կը յայտարարէր թէ այն Հայերն որք իրենց երկու ազգայիններու սպաննիչքն եղող այս ինչ Քրդերն մեռուցած լինելու ամբաստանութեամբ բանտարկուած էին, ազատ արձակուեցան, որովհետև ստուգուեցաւ թէ յիշեալ Քըրդերն ողջ առողջ էին և Հաւատացելոց Հրամանատարին Համիտիյէ գնդերուն մէջ կը ծառայէին։

Այս Համիտիյէ զօրաց սպաներուն նըկատմամբ առ հասարակ, և անոնցմէ միոյն, Մոսթիկոյի վերաբերութեամբ խօսուածներն մասնաւորապէս, հաւանականութենէ այնքան հեռու կ'երեւէին որ ես

չատ նեղութիւն յանձն առի ճշմարտել անոնք։ Որոշեցի տեսակցութիւն մ'ունենալ Մոսթիկոյի հետ, որ Կարնոյ բանտին մէջ էր, և իմանալ ճշմարտութիւնն իւրային իսկ շրթունքէն։ Առաջին փորձս ի դերեւ ելաւ։ Մոսթիկո խիզախ ոճրագործ մի զոլով, և անգամ մի գնդանէն փախած լինելով, այժմ մասնաւոր զգուշութեանց ենթարկուած էր։ Եթէ՝ ըստ առաջին ծրագրիս՝ ծպտեալ երթայի զինքն տեսնել ի բանտին, ողջ չպիտի կրնայի վերադառնալ։ Իբր երեք եօթնեակ ոլորուն բանակցութեանց զոհելէ յետոյ՝ յաջողեցայ բանտապետին ունկն դրաւել. նախ քսակն պարարելով։ Երկրորդ գործս եղաւ աւազակն իսկ շահիլ, և վերջ ջանիցս այն եղաւ որ կարգադրութիւն արինք որ Մոսթիկոի թոյլ տրուի բանտէն ելնել գաղտ, գիշերայն, գալ իմ սենեակս անցունել 6 ժամ, և ապա վերադարձուիլ ի բանտն։

Ի հասանել նշանակուած աւուրն, բանտապետն ժխտեց համաձայնութեան իւրային մասն, այն առարկութեամբ թէ Մոսթիկո, իրազեկ իւր մահուան դատավճռին, գուցէ չվերադառնար ի բանտ։ Անդրադոյն բանակցութենէ վերջ ես յօժարեցայ երկու պատանդ տալ իրրեւ երաշխիք նորա վերադարձին. մին Քուրդ եղբայր մ'էր, զոր, ըստ քրդական պատուոյ ըմբռնման, չպիտի ուզէր աւազակն զոհել, իւր կեանքն ազատելու համար։ Վերջապէս գիշեր մի եկաւ նա առիս, տանեաց վերայէն, չիցէ թէ իմ դուռնը պահող ոստիկանք լրտեսէին զինքն։ Պահեցի զինքն բոլոր գիշերն, ցուցի զինքն Կարնոյ էն յարգելի Եւրոպացւոց երկուքին, և, որպէս զի ոչ է երկբայութիւն չկարենայ նետուիլ պատմութեանս վերայ, իմ և աւազակին լուսանկարն ի միասին հանել տուի առաւօտուն։

(Քոնթէմփորէրի Ռիվիու) ԷՄԻԼ ՏԻԼՕՆ

(Շարունակելի)

Կը խնդրեմք որ մընի օրտրրի կամ մանտատ տը փոսթի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Սոյն Դաշնակցութեան կանոնագրութեան օրինակներն այս անգամ «Հայքի» ծոցով կը յղուին ամէն կողմ, թէ ի Միացեալ Նահանգս թէ այլ երկիրներ։

Սոյն դաշնակցութեան անդամ լինելու բաղձացող անհատք և ընկերութիւնք թող հաճին թղթակցիլ նախագահին հետ հետեւեալ հասցէիս

Dr. M. S. Gabriel,
President of the Patriotic Alliance of the Armenians, 202 West 23d St.,
NEW YORK

Երեք ամիս աշխատեցանք որ այլ յարմար ոք յանձն առնու նախագահութիւնն, և չյաջողելով վերջապէս հարկ եղաւ բառնալ զայն։ Եւ Հայքի խմբագրին արդէն ծանրաբեռնեալ ուսերուն վերայ։

ԸՅԼ ԵՒ ԸՅԼՔ

Զրոյց ելաւ թէ Սուլթանն Օգ. 31ին Ֆէրման մի պիտի հանէր ընդհանուր բարեկարգութեանց ծանուցումն անելու բոլոր կայսրութեան մէկ ծայրէն ցմիւսն։

Հաւանական է որ Հաւատացելոց Հրամանատարն ապա համոզուած լինի այդ խաղին անշահեկանութեանն, զի նո՞ր լուր չի լսուիր այդ նոր ԽԱԹԻ նկատմամբ։

***

Բրիտանական նոր Խորհրդարանին բացման և Թագուհւոյն գահաճառին առթիւ նշանաւոր ատենախօսութիւններ եղան թէ Լորտերու թէ Համայնից Տանց մէջ, ուր Հայաստանի վիճակն կեդրոնական խնդրոյ տեղ բռնեց։ Եթէ թերթիս անձուկ էջեր ներէին, պիտի ուզէինք թարգմանել Լորտ Բոզպէրիի և Լորտ Սալզպէրիի ատենախօսութեանց հայկական մասերն, յորմէ պիտի տեսնուէր թէ Անգլիա սկսած է արդէն չռնդալից ապտակներ զարնել Համիտի երեսին։ Եւ Համիտ, որ ասի չատ

նախանձաւոր կ'երեւի իւր անկախութիւն պահպանելու, անտի դառնալով Ռուսիոյ և Ֆռանսայի կը գերեկնայ ու կ'ասէ «Նայեցէ՛ք, Անգլիա ինչ խստութեամբ ականջս կը քաշէ, կը խնդրեմ ասէք նմա որ ինծի հետ իբրեւ խեռ աղու հետ չվարուի։...»

* * *

Խտիվն ոչ քաղաքական այլ դրամական խնդիրներ կարգադրելու համար գընացեր է ի Կ. Պոլիս։ Իւր մեծ հօրեղբայրն Հալիմ փաշա, երբ մեռաւ անցեալ տարի, երկու միլիոն լիրայի հարստութիւն մի թողուց։ Եւ նախկին խտիվ Իսմայիլ փաշան ալ իբր 5 միլիոն լիրա թողուց։ Այս երկու անբաւ հարստութիւններէն, որոց ժառանգորդն է ներկայ խտիվն, մէկ սատակ չէ ստացած։ Ընդհակառակն, Իսմայիլ փաշայի երեք այրիներուն ապրուստն ինքն իւր քսակէն հոգալու ստիպուած է։ Սուլթանն իւր գանձուն մէջ հիւրասիրած է այդ բոլոր հարստութիւն։ Ընչան չկայ թէ ամենակուլ Համիտ այդ խոշոր գումարներուն ո և է մէկ մասն փրսխել բարեհաճած լինի։

* * *

Հայր Պարոնեան, Մանչէսթրի Հայոց Արժ. հովիւն, Տէյլի Նիւզի մէջ մի նամակ հրատարակած է որով կը հրաւիրէ Անգլիոյ եկեղեցիներն յատկապէս միտք բերել Սասնոյ թշուառներն, կոտորածին տարեդարձին առթիւ։

* * *

Էմիլ Տիլօն, որ Սասնոյ կոտորածին առթիւ եւրոպական թղթակիցներուն մէջ առաջին տեղն բռնեց և այնքան երկար ու հշդրիտ տեղեկութիւններ, շարք մի նամակներով, հաղորդեց Եւրոպիոյ ի ձեռն Տէյլի Թէլէկրաֆի, այս անգամ Բօնթէմփորէրի Բիվիուի մէջ 35 երեսներէ բաղկացած մի յօդուած հրատարակած է «THE CONDITION OF ARMENIA» խորագրով, որ բովանդակ Հայաստանի վիճակին վերայ յորդառատ լոյս կը սփռէ և օրըստօրէական արհաւրաց այնպիսի ընդարձակ և այնքան զարհուրելի տեսարան մի կը պարզէ որոց առջեւ մարդկութիւնն բերանաբաց կը մնայ։

Զայդ մեծ յօդուած, ցարդ հրատարակուած հազարաւորներուն լաւագոյնն, պէտք է Հայք ևս ճանաչեն եթէ կ'ուզեն Հայաստանի կացութիւնն իւր բովանդակ ահաւորութեամբ ըմբռնել. ուստի և սակաւ ինչ սեղմելով կը դնեմք անոր թարգմանութիւնն մերայնոց առջեւ.

* * *

Պոսթոնի Ամերիկեան Պորտին Հայաստանէ եկած միսիոնարական նամակներէն կը տեսնուի թէ հալածեալ Սասունցիք ահիւ և դողով կը մտենան նպաստ բաշխող Ցանձնախմբին։ Նոքա կը պատրաստուէին տեսնել իրենց բաղդն այս տարի յառեգոյն քան զանցեալ տարւոյն։ Տ. Շիփլի, անգլիական դեր-հիւպատոս, քաջալերեց զնոսա թէ կրնան վստահիլ ազրութեանց ջանադրութեանն, սակայն և այնպէս նոքա վարանելով կուգան օգնութիւն ստանալ։ Թրքական նպաստամատոյց յանձնախումբն կը ջանայ որքան որ կարելի է խոչընդոտանել ուրիշ նպաստամատոյց գործողութիւններն։ Ցայտնի կ'երեւի թէ թուրք կառավարութիւնն չպիտի թողու որ Հայք Հայոց նպաստ բաշխեն։ Անգլիական դեսպան Սըր Ֆ. Բըրի, Անգլիայէն յղուած նպաստներուն բաշխիչ կարգեց զՊատ. Ճարճ Ըէյնօլտս, Վանէն, և զՊատ. Բօլ, Բաղէշէն, երկուքն ալ Ամերիկեան Պորտի միսիոնարք որք շատ տարիներէ ի վեր Հայաստան կը բնակին։

* * *

Մինիսթրը Թէրէլի խնդրանօք Կարնոյ նահանգապետն ուղեկից մի պիտի տայ Տ. Սէքլէպէնի, Նիւ Եորքցի, որ Լէնցի մարմինն կը փնտռէ։ Ցեշելի է թէ Ամերիկացի Լէնց, հեծանուաւորն, սպաննուած էր Հայաստանէն անցնելու ատեն։

* * *

Պէրութի Ամերիկեան հիւպատոսն, Թոմաս Կիպսըն, հրահանգ ստացած է երթալ ի Տարսոն և հետաքննել ի մասին

Թրքական յարձակմանն որ անցեալ օր գործուած է քաղաքին ամերիկեան կըրթական մէկ հաստատութեան վերայ, որ «Ս․ Պօղոսի Ճեմարան» անունն կը կրէ ։ Ամերիկեան «Մարպլհէտ» զրահաւորն ալ դէպ Իսկէնտէրուն ուղղուած է ։

***

MISS ALICE STONE BLACKWELL Հայր ԱԼԻՇԱՆԻ մէկ քերթուածն թարգմանած է անգլիերէնի, (Լուսինն Հայ գերեզմանատան վերայ), և հրատարակած է Պօսթոնի Փօսթին մէջ ։ Պատկանեանի Օ․ բորի երգն ալ թարգմանելով հրատարակած է Ինթր Օշընի մէջ ։

***

Օգ․ 31ին Նիւ Եօրքի Հայոց ժողով մի եղաւ ուր Սասունցի Տ․ Վարդան պատմեց կոտորածին անցքերն ։ Ժողովն առանց լաւ պատրաստութեան և անդէպ աճապարանօք հրաւիրուած էր, այնպէս որ առթին վայելուչ եղող բազմութիւն ներկայ չէր և ոչ ալ ժողովականաց աւիւնն կը հաւասարէր պարագային ։ Ատենապետն էր Պատ․ Հայկունի, որ համառօտ և ազդու ատենախօսութեամբ մի ներկայացուց զՏ․ Վարդան, և սա, սասունցւոյ գաւառաբարբառի հմայիչ շեշտերով խօսեցաւ իբր 50 վայրկեան ։

***

Վերջին պահուս գոհութեամբ ստացանք 13 տոլար 2 սէնթի նուիրատուութիւն Թուրքիոյ Կ․ քաղաքէն, ի ձեռն Հ․ Դ․ ի ։ Աւասիկ նուիրատուաց ցուցակն իրենց կեղծ անուններով ․

Ծով 50 դահեկան, Արարատ Գ․ Խ․ Կ․ Բ․ Ց․ Օ․ Պ․ Մ․ 220 դ․, Ս․ Կ․ 40 դ․, Ցորդանան 40 դ․, Մ․ 10 դ․, Բախող 10 դ․, Արեգակ 50 դ․, ընդ ամենայն 420 դահեկան ։

Ուօքիկէնէն, Իլլինոյս, ի ձեռն Հ․ Ս․ ի ստացած եմք եօթ տոլար բաժնեգին և նուէր ի միասին ։

Տիար Տ․ Շուշան հաճած է յանձն առնուլ «Հայքի» գործակալութիւնն Ճուստր ։ Բաժանորդք կրնան նմա վճարել գինն ։

ՆՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Մ․ Ս․ ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

Իւր տեսակին մէջ առաջինն ու միակն է ի հայերէն գրականութեան ։ Ի պէտս վարժարանաց յօրինուած է, և կուսուցանէ կարդալու և ճառախօսելու արուեստն, արուեստ գեղեցիկ և դժուարին, որոյ հիմնական կարեւորութիւնն դեռ բաւական զգալի եղած չէ առ մեզ ։ Բսան և մէկ դասերու մէջ ամփոփուած են կանոնք և բացատրուած են օրինակօք հետեւեալ հանգամանք ճառախօսութեան ․— ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ՁԱՅՆ, ՇՆՉԱՌՈՒԹԻՒՆ, ՊՆԴՈՒՄՆ, ՈԼՈՐՄՈՒՆՔ, ՍԱՀՈՒՄՆ, ՁԱՅՆԻ ԱՍՏԻՃԱՆՔ, ՁԱՅՆԻ ԶՕՐՈՒԹԻՒՆՆ, ՁԱՅՆԻ ՈՐԱԿՆԵՐՆ, ԱՐԱԳՈՒԹԻՒՆ, ՀԱՐՑ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ և ՇԱՐՔ, և ատենախօսութեան պէտպէս ՇԱՐԺՄՈՒՆՔ ներկայացուած են 16 պատկերօք ։

Գինն է 2ուկէս ֆրանք կամ 1 րուպլի (50 սէնթ ։) Ութածալ 120 երես ։ 1891

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՆՔ

Հայ ցեղին Հոգեբանութեան վերայ անդրանիկ երկասիրութիւն մ'է այս ուր պարզուած են Հայոց ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԻՈՅՆ բարեմասնութիւնք և ազնիւ միտումներն, և ցուցուած է Հայաստանի բնագրական ազդեցութեանց դերն հայկական բնաւորութիւնն կազմելու մէջ ։ Այդ իմաստասիրութենէ կը բխին չորս եզրակացութիւններ ազգային խնդրականի և դաստիարակութեան վերաբերութեամբ, որք կարճ ի կարճոյ նշանակուած են ։
Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 31 երես ։ 1894

ԱՇԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Այս տետրակ հաւաքածոյ մ'է հեղինակին ազգային ատենախօսութեանց եօթին, որք են ԶԷՅԹՈՒՆ, ՍՈՒՐ, ՀՆԱՐ Է, ԴՐԱՆ ԳԱՂՏՆԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ, ԶԱՐԿ, ՆԵՐՔԻՆ ՎՏԱՆԳՔ, ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ՕՐԷՆՔԻ ՈՒԺՈՎ։ Գինն է 1 ֆրանք (20 սէնթ) 71 երես։ 1893

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ

Հայ բողոքական եկեղեցւոյ մի անջատ կազմաւորման առաջնորդող սխալ քայլերը պատմաբանելէ յետոյ՝ հեղինակն կը ցուցնէ թէ այդ եկեղեցական կազմակերպութիւն բոլորովին զուրկ լինելով հայ ազգային հանգամանքէ՝ չի յաջողիր մեր մէջ, և կ'առաջարկէ որ հայ բողոքականք թողուն այդ օտար դրութիւնն և բուն ազգային կամ մայրենի եկեղեցւոյն բարեկարգեալ այնպիսի մէկ դրութիւնն որդեգրեն որ կարենայ իրրեւ մաքրուած և ազգային եկեղեցւոյ տիպար նկատուիլ ազգին լուսամիտ մասէն։

Գինն է 1 ֆրանք (20 սէնթ) 61 երես։ 1888

«Հայքի» նախորդ տարիներն կը վաճառուին հետեւեալ գներով.

Ա. տարի, 1 տալար 50 սէնթ կամ 7.5 ֆր.
Բ. ,, 2 ,, կամ 10 ֆրանք։
Գ. ,, 2 ,, ,, ,, ,,
Դ. ,, 2 ,, ,, ,, ,,

ՄԱՐԶԱՐԱՆ

ՄԱՐԶԱՐԱՆՆ 117 երեսէ բաղկացած աշխատասիրութիւն մ'է Տ. Գրիգոր Գասպարեանի գրչէն, տպեալ Նիւ Եորք, Մ. Ս. Գ. ի տպարանում, 1892ին։ Առաջին մասին մէջ, որ 77 հատուածներէ կազմեալ է և 36 ձեւերէ կամ պատկերներէ, կ'ուսուցանէ թէ զինուորն ինչպէս պէտք է կայնի, բարեւէ, քալէ, վազէ, շրջան անէ, սուին, հրացան բռնէ ու գործածէ, կրակէ անհատարար, շարքով, ծնրադրութեամբ, գետնամած ևն. ևն.։ Երկրորդ մասում կ'աւանդէ «ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔ ՄԱՐՏԱԳԻՏԱԿԱՆՔ։» Այս գիրքն կարդալ և ըստ այնմ իրենք զիրենք մարզել պարտին մեր երիտասարդք։ Գին 50 սէնթ։

ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ

ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք դէպ ի Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ոևէ կողմ երթալ ուզողներուն։ Մասնաւոր գծեր ունիմք ուղղակի Թուրքիա կամ Ռուսիա տանելու։ Մեծ դիւրութիւն մը կը լինի համբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ գծով պիտի ուղեւորին, և տոմսակնին կը գնեն մէկէն, որով թէ՛ ածան գնով պիտի առնեն և թէ՛ օտար երկիրներու մէջ տոմսակ գնելու համար միջնորդներու պէտք չունենան և չխաբուին։ Նոյնպէս Եւրոպայէ դէպի հոս եկողներուն ևս մեծ դիւրութիւն է տոմսակը հոս գնել և խրկել, որ ստակը չկորսուի և չխաբուին ինչպէս շատերուն եղած է։ Ամենէն լաւ գիծը գիտցուած է ՖՐԷՆՉ ԼԱՅՆը որուն վրայ բոլոր համբորդներէն գոհունակութիւն լսած ենք։ Նաւերը մեծ և գեղեցիկ են և արագ կ'երթան. լաւ կերակուր և գինի կուտան, և ածան գնով։

Նաև մեր տանց ստակի փոխադրութիւնը տարիներէ հետէ գոհացուցած է բոլոր յաճախորդներն։ Փորձառուներէն հասկցիր ստակդ ձեռքէդ հանելէդ առաջ որպէս զի չխաբուիս, երբ ըսեն թէ ուրիշներէն ածան կուտանք։ Ապահովութիւնը բոլոր շահերուն մեծագոյնն է և շատ տարիներու փորձառութիւնը մեծ ապահովութիւն մ'է։ Ստի ստակ և տոմսակ Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ոևէ կողմ խրկել ուզողներ կամ տեղեկութիւն ուզողներ կրնան դիմել հետեւեալ հասցէին։

Նամակներու պատասխանները չուտով կը գրուին։

D. M. SHOOSHAN
41 Exchange St. Worcester, Mass.

BUSH & Co.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

(Հաստատեալ ի 1849)

65 Front St., Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

CAN I OBTAIN A PATENT? For a prompt answer and an honest opinion, write to **MUNN & CO.**, who have had nearly fifty years' experience in the patent business. Communications strictly confidential. A **Handbook** of Information concerning **Patents** and how to obtain them sent free. Also a catalogue of mechanical and scientific books sent free.

Patents taken through Munn & Co. receive special notice in the **Scientific American**, and thus are brought widely before the public without cost to the inventor. This splendid paper, issued weekly, elegantly illustrated, has by far the largest circulation of any scientific work in the world. $3 a year. Sample copies sent free.

Building Edition, monthly, $2.50 a year. Single copies, 25 cents. Every number contains beautiful plates, in colors, and photographs of new houses, with plans, enabling builders to show the latest designs and secure contracts. Address

MUNN & CO., NEW YORK, 361 BROADWAY.

MORRISON & Co.

ԴԵՐԶԱԿ

106 Fulton St., New York

Ամառուան համար ընտիր ձեռք մի զգեստ, ձեր վերայ յատկապէս ձեւուած չափուած կը շինեմք 16 տոլարի, իսկ սառնազգեստ (փանթոլոն) 4 տոլարի։ Ձեւին կատարելութիւնն ու ճշդութիւնն կերաշխաւորենք։

ՀԻՆ ԱՇԽԱՐՀՆ ՓՈՂ ՈՒՂԱՐԿԷ ԱՄԷՐԻԿԷՆ ԷՔՍՊՐԷՍ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՆԻ ՕՐՏԸՐՈՎ

(American Exprss Co'.s Money Order)

Կատարելապէս ապահով են։ Այդ ընկերութեան ո և իցէ օֆֆիսէն կրնաս առնուլ հետեւեալ պայմաններով վճարելի յերոպա.

Ոչ աւելի քան			5	տոլար	սէնթ
,,	,,	,,	10	,,	8
,,	,,	,,	20	,,	10
,,	,,	,,	30	,,	12
,,	,,	,,	40	,,	15
,,	,,	,,	50	,,	18
,,	,,	,,	100	,,	30

ՆԻՒ ԵՈՐՔ

ՀԷԹ ՀԱՈՒՕ

անունն է Ուսաբրի Ֆրոնթ փողոցին մէջ գտնուող թիւ 14 վաճառատանն, ուր կը վաճառուին գլխարկ, գլխանոց, ձեռնոց, չապիկ, օձիկ, փողկապ, ամենն ալ

ԱՄԵՆԱԱԺԱՆ ԳՆԵՐՈՎ

Հայ գաղթականութեան պէտքերուն համապատասխանող խանութն է ասի, ինչպէս արդէն շատերն փորձով տեսած են։

ՈՒՍՏԸՐԻ ՀԻՆԳ ՍԷՆԹ ԽՆԱՅԵԼՈՒ ՊԱՆՔԱՆ

Այս պանքան հիմնուած է 1854ին. կ'ընդունի մինչև անգամ հինգ սէնթ։ Ժամերն են կէս օրէն առաջ 9էն մինչեւ կէս օրէն վերջ 4։ Շարաթ օրերն 9էն մինչև 1։

Հասցէն է 314 Մէյն փողոց։

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

5 և 7 E. 10դ Փողոց

5դ Էվիւնիւի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր։

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվինիու Նիւ Եորք

26դ և 27դ Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ